

## Ուսանողական շարժումը Հայաստանում ուսումնասիրվել է ԵԱՀԿ աջակցությամբ

ԵՐԵՎԱՆ, 18 սեպտեմբերի 2008թ. – Չնայած հայ ուսանողական շարժումը դեռևս չի իրականացնում ուսանողական ներկայացուցչության չորս հիմնադրույթները՝ բավականին մեծ է ոգևորությունը՝ բարեփոխելու իրավիճակը. այսպիսին է Եվրոպական ուսանողների միության կողմից իրականացված ուսումնասիրման եզրակացությունը: Այսօր Երևանում հանրության քննարկմանը ներկայացվեց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի պատվերով իրականացված զեկույցը:

Ուսանողական ժողովրդավարության չորս հիմնական սկզբունքներն են՝ բոլոր ուսանողների համար բաց մասնակցություն, ուսանողների որոշումների կայացման ժողովրդավարական գործընթաց, բոլոր ուսանողների և նրանց շահերի ներկայացվածություն և անկախություն՝ բուհական ղեկավարությունից, կառավարությունից և քաղաքական կուսակցություններից:

Եվրոպական ուսանողական միությունը միավորում է 38 Եվրոպական երկրների 49 ուսանողական ազգային խորհուրդներ, որոնք ներկայացնում են շուրջ 10 միլիոն ուսանողի շահեր:

Չեկույցում նշվում է, որ հանդիպումների ժամանակ գնահատող խմբին ուսանողները խանդավառությամբ հանդգնումք էին արտահայտել, որ յուրաքանչյուր բուհում կան ուսանողական խմբեր, որոնք պատրաստ են ակտիվ գործունեություն սկսել: Չեկույցի նպատակն էր Հայաստանի բարձրագույն կրթական սեկտորի ուշադրությունը սևեռել ուսանողների ներկայացվածության ձևերի վրա:

«Հուսով ենք՝ զեկույցը մտորումների տեղիք կտա և կխրախուսի քննարկումներ Հայաստանում ուսանողական շարժման դերի մասին՝ հաշվի առնելով եվրոպական փորձը այս ոլորտում», - ասաց ԵԱՀԿ գրասենյակի ժողովրդավարության հարցերով պատասխանատու Սվեն Հոլդարը. - «Մենք հավատացած ենք, որ ուսանողական ներկայացուցչության վերաբերյալ հանրային քննարկումները կնպաստեն ուժեղ ուսանողական շարժման ձևավորմանը, որը կօգնի բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների որակի բարելավմանը»:

Ուսումնասիրությունը տրամադրում է մի շարք առաջարկներ՝ ինչպիսիք են բարելավել տեղեկատվության հոսքը՝ ուսանողներից և ուսանողներին, քննարկումների ավելի լայն բազմակարծության ապահովում, ռեսուրսների նկատմամբ ինքնավարության տրամադրում, լավագույն փորձերի ուղեցույցների տրամադրում և ուսանողական խորհուրդների օրենսդրությունը վերանայում՝ ավելի անկախ դարձնելու ուղղությամբ:

Եվրոպական ուսանողական միությունից Յենն Յունգբլյուքը հավելեց. «Մեր կարծիքով ուսանողներին կազմակերպելը առաջին հերթին հենց ուսանողների պատասխանատվությունն է, սակայն բարձրագույն կրթական համակարգը կարող է ապահովել ուսանողական ներկայացուցչության կառուցվածքի ձևավորման ավելի բարենպաստ պայմաններ»:

ԵԱՀԿ գրասենյակի հրավերով Եվրոպական ուսանողների միության փորձագետները այցելեցին Հայաստան՝ ուսումնասիրելու Հայաստանի բուհական ուս.խորհուրդների ուժեղ և թույլ կողմերը: Այցի ընթացքում նրանք հանդիպեցին ռեկտորների, փոխնախարարների, արհմիությունների, ուսանողական խորհուրդների, ուսանողական ՀԿ-ների և ուսանողների ազգային խորհրդի հետ:

Գնահատման զեկույցը ԵԱՀԿ երիտասարդական նախաձեռնությունների մաս է կազմում, որոնց նպատակն է խթանել երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը արդեն առկա երիտասարդական կառավարման մարմիններում: